աւետարանի մէջն է կամ Մողնու աւետարանի և Հաւուց Թառի Ամենափրկչի, որոնք այդ կողմից նման են իրար և կողմնակի կերպով հաստատում են մեր կարծիքը վերջինիս ծագման խնդրի նկատմամբ։ Խաչից իջեցնելու պատկերի մէջ ևս Յիսուս կանգնած է ուղիղ գետնի վերայ. Նիկոդիմոս թէև գրկել է Յիսուսին ճիշդ այնպէս, ինչպէս Հաւուց Թառի Ամենափրկչի կամ Խանդալի աւետարանի մէջ, բայց առանց սանդուղի վերայ բարձրանալու։

Մողնու աւետարանն էլ մեր այս երկու ձեռագիրներից քիչ յետոյ միայն կարող է ծագած լինել. Մարիամ և Յովհաննէս իրենց կեցուածքով, ձեռքերի դիրքով, մասամբ եւ դէմքի արտայայտութեամբ նման են Խանդալի աւետարանին. բայց Յիսուսի իրանն աւելի է թեքուած դէպի աջ, արիւնն էլ աւելի ուժեղ հոսանքով դուրս ցայտում խոցուած կողից. իսկ Ղուկիանոսը գլուխն այնպէս է բարձրացրել, որ արիւնը աչքի մէջ ցայտել կարողանար։ Յիսուսի մարմնի դիրքը, արեան հոսման ձևը, գուցէ և հրեշտակների անդրիներ, մնացորդներից դատելով՝ աւելի մօտ են Դափնիի որմանկար խաչելութեան, որ ԺԱ. դարի գործ է (1)։ Մարիամի և Յովհաննու կեցուածքը և հրեշտակները մանրամասներով Սալերնոյի Պալիոտտոյի բուն խաչելութեան առանց ներքևի տեսարանների, ըստ ոմանց ԺԲ. դարի, իսկ ըստ Կրաուլի ԺԱ. դարի գործ, բիւզանդական եւ տեղական լատինական ազդեցութեամբ (2)։



Պատկեր 33

Աւետարան Սմբատ Գունդստապլի. մանրանկարիչ Աւետիք.

Մողնու աւետարանը համարում ենք ԺԱ. դարի վերջերի, ոչ ուշ քան ԺԲ. դարի գործ։

ԺԳ.

ԺԳ. դարի Ամենափրկիչ խաչարձանների պատկերագրութիւնը բոլորովին նոյն չէ, բայց շատ նմանութիւններ ունի նախընթաց պրակում նկարագրած խաչելութեան և խաչից իջեցնելու մանրանկարների և մասամբ Հաւուց Թառի Ամենափրկչի հետ. ուրիշ խօսքով մեր քննութեան նիւթ եղած մոտիւների զարգացման երրորդ օղակն է Հաւուց Թառի Ամենափրկչից սկսած։ Տարաբաղդաբար ԺԱ. և ԺԲ. դարերից նկարագրդ ձեռագիրներ քիչ են հասել մեր ձեռքը, հասածներն էլ պակասաւոր վիճակի մէջ. Գագիկ Բագրատունի Կարսեցու աւետարանը զրկուած է իւր շատ նկարներից (3). մի բարբարոս ձեռք կարել, հանել է պատկերների մեծագոյն մասը, բնագրից դատե-

(1) Diehl. 465. 435։

(2) Gesch. der Christ. Kunst. II. 41 (պատկ. 20)։

(3) Ձեռագիրը պահւում է Երուսաղէմի Հայոց մատենադարանում՝ N 2556|1։